## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք
ՀՀ Տավուշի մարզ, ք. Այրում, 026663842, ayrum.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2015 թվականի N 09 -Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 4 ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Բարեկամության փողոցի թիվ 26 հասցեում գտնվող թիվ 4 հանրակացարանի 25.03.2015թ. բնակիչների դիմումը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով ՝ համայնքի ավագանին որոշում է .

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականությունը հանդիսացող Բարեկամության թիվ 26 հասցեում գտնվող թիվ 4 հանրակացարանի բնակելի տարածքները անհատույց սեփականության իրավունքով , նշված տարածքում հաշվառված և մշտապես բնակվող վարձակալներին տրամադրելու վերաբերյալ:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին մշակել հանրակացարանի տարածքը իրենց վարձակալներին տրամադրելու ժամանակացույցը , կարգը և պայմանները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ -5 Դեմ - 0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՀԱՍՄԻԿ
2. ԱՍՏԻԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ՅԱՐԱԼՅԱՆ ԱՐԿԱԴԻ
5. ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2015թ. ապրիլի 21

ք. Այրում